Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13 սեպտեմբերի 2023թ. ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ Գլխավոր տնօրեն Էդուարդ Մարտիրոսյանս վերանայելով «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-40/23» ծածկագրով հրապարակված մրցույթի գնման ընթացակարգը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար մալուխների և մալուխային պատրաստվածքների ձեռք բերման նպատակով հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-40/23» ծածկագրով գնման ընթացակարգի 6, 15, 18 և 25-րդ չափաբաժինների համար ընտրված մասնակից է ճանաչվել «ՆՎ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն և 2023թ. մայիսի 16-ին «ՀԱԷԿ» ՓԲԸ և «ՆՎ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև կնքվել է №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-40/23-01/179 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

«ՆՎ ԳՐՈՒՊ» ՍՊԸ կողմից էականորեն խախտվել է պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 2-ով (մատակարարման ժամանակացույց) սահմանված մատակարարման ժամկետները (պայմանագրի կնքման օրվանից 70 օրացուցային օրվա ընթացքում), որի հետ կապված «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից Պայմանագիրը լուծվել է միակողմանի:

Ղեկավարվելով Պայմանագրի դրույթներով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասերով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «ՆՎ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում լիազորված մարմնին և մասնակցին տրամադրելու օրվանից:
3. Որոշումը կայացնելու հաջորդող օրն այն տրամադրվում է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին՝ «ՆՎ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին:

Գլխավոր տնօրեն **Է. Մարտիրոսյան**